




ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐՂԱՊԵՏԻ ՄԱՀՎԱՆ 50-ԱՄՅԱ
ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ

Նոյեմբերի 3-ին, կիրակի օրը, Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց նորընծա Տ. Չավեն արեղա խաչատրյանը:

Հավարտ ս. պատարագի հոգևոր ճեմարանի փոխտեսուչ Տ. Հայկապուն վարդապետ Նաջարյանը Կոմիտաս Վարդապետի մահվան 50-ամյա տարելիցի առթիվ ընթերցեց Վեհափառ Հայրապետի՝ 1969 թ. Կոմիտաս Վարդապետի 100-ամյակի ոգեկոչման առիթով հրատարակված հոբելյանական կոնդակը, որտեղ Նորին Սրբությունը ի մասնավորի ասում է.

«Ամենայն Հայոց Հայրապետը, մօտ ինը տասնեակ տարիներ առաջ, 1881 թուին, կը լսէր երկչոտ այլ քաղցր ձայնը փոքրիկ Սողոմոնին, որ կու գար հեռաւոր Կուտիսայի հայոց համայնքէն, ուսանելու Գեորգեան ճեմարան, ի Սուրբ Էջմիածին:

Մայր Աթոռոյ հոգեւոր դպրոցը, ուսման տարիներու ընթացքին, լոյս եւ ձեւ տուաւ անոր մտքին, հոգիին եւ աճեցուց անոր շնորհները, Փրկչի Իջման Սեղանի ահեղ զօրութեամբ:

Այսպէս ծնունդ առաւ եւ շողալ սկսաւ՝ հանձարը Կոմիտաս Վարդապետին:

Սողոմոն, նախախնամութեան ընծան եղաւ՝ Սուրբ Էջմիածնին: Կոմիտաս Վարդապետ Սուրբ Էջմիածնի ընծան հանդիսացաւ՝ հայ ժողովուրդին:

Կոմիտաս Վարդապետ բարենորոգիչն է հայ եկեղեցական եւ ժողովրդական երաժշտութեան եւ գիտարարը, որուն գործը կարելի է արժեւորել միայն Մեսրոպեան չափանիշով: Հազար հինգ հարիւր տարիներ յետոյ, Կոմիտաս Վարդապետ եկաւ շարունակելու Օշականի Մեծ Վարդապետին գործը, երգի անդաստանին մէջ, վասն զի երգը՝ խօսքի շարունակութիւնն է եւ պայծառակերպումը անոր:

Արդարեւ, ինչպէս Սուրբ Մեսրոպ քառսէն դուրս բերաւ եւ բիւրեղեց ձայները հայ բարբառին, եւ իր ազգին ու աշխարհին պարգեւեց կոթողը հայերէն լեզուին, այնպէս ալ Կոմիտաս Վարդապետ՝ պեղեց, մաքրեց ու լոյս աշխարհ բերաւ կոյս աղբիւրը հայ երգին: Եւ բազում տարիներ, անդու, անյոգնաբեկ, միշտ նոր աւիւնով ու ստեղծարար տենդով, այդ աղբիւրէն հայ երգին լոյսը բաշխեց իր ժողովուրդին:

Հայ ժողովուրդը, Կոմիտասեան երգին մէջ գտաւ, ճանչցաւ իր հոգին, իր ոգեկան ինքնութիւնը: Կոմիտաս Վարդապետ սկիպը մըն է, որ վախճան չունի: Ան պիտի ապրի հայ ժողովուրդով, հայ ժողովուրդը պիտի ապրի իրմով, ինչպէս երէկ, ինչպէս այսօր, այնպէս ալ յաւիտեան: Առանց Կոմիտաս Վարդապետի չկայ հարապատ հայ երաժշտութիւն: Ամէն հայ երգի մէջ, գոնէ ճառագայթ մը պետք է շողացնել Կոմիտաս Վարդապետի հոգիէն:

Եւ մանաւանդ՝ ոչ իսկ յովտ մը պէտք է պակսեցնել կամ աւելցնել Վարդապետի երաժշտութեան մէջ, որ «Մէկ ձայնանիշի համար պատրաստ էր արիւն թափելու», ինչպէս ինք ըսած էր առիթով մը:

Ու երբ Կոմիտաս Վարդապետ, իր ստեղծագործ հանձարի ամենաբեղուն շրջանի սեմին կը գտնուէր եւ կը պատրաստուէր ոգեկան նոր ուսումով, հայ երգը հասցնել այնպիսի բարձունքներու եւ հնչեցնել այնպէս, որ անոր լոյսով բեղմնաւորուէր երաժշտական աշխարհը համայն, ոճրագործ ձեռք մը փշրեց քնարը անոր երգին, անոր կեանքին:

Այդ պատահեցաւ 1915-ի սեւ ու դաժան տարին, երբ արեան մէջ խեղդամահ կըլլար ժողովուրդ մը ամբողջ:

Տէր Աստուած, ինչպէ՛ս պատահեցաւ այդ: Ինչպէ՛ս հանդուրժեցին երկինք ու աշխարհ:

Ու այլեւս լռեց Կոմիտաս Վարդապետ: Ու տարիներ անցան: Տարիներ տառապանքի, մաքառումների, հերոսական ճիգերու: Եւ վերջապէս, վերջապէս՝ յաղթանակ, եւ նոր ու խաղաղ կեանք ապահով: Ծագած էր նոր առաւօտը Հայոց մայր հողին, հայոց պատմութեան:

Իր ժողովուրդով, վերածնաւ նաեւ նահատակ Վարդապետը, Կոմիտասը ամենայն

հայոց: Այո՛, կենդանի է ան եւ իր երգը՝ յաւերժ: Ինչպէս ոգին՝ հայոց հերոս արծիւին, թյսօր Հայաստանի լեռներուն եւ ձորերուն վերեւ կը սաւառնի, նոյնքան յաղթական՝ երգը Կոմիտասին, շունչը Կոմիտասեան: Կը հնչէ ան վճիտ ու ազատ, նոր լոյս ու թափով, նոր ծնունդ առած, աճած բազում տաղանդներով, որոնք մեր օրերուն, փառքը կը հիւսեն հայ երաժշտութեան, մինչեւ հեռաւոր ափերը օվկիանոսներուն:

Լսէ Կոմիտաս, Վարդապետ արդար, երգը նոր Հայաստանին: Այդ քու երգդ է, որ քեզի կու գայ: Այդ երգի թելերով, ամբողջ ազգը հայոց, որ ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի, երախտապարտ սրտով կը խոնարհի քու յիշատակիդ եւ մեծ գործիդ առջեւ, քու տեսիլքներուդ յաւէտ հաւատարիմ մնալու սրբազան ուխտով:

Այսօր Հայրապետը Հայոց, օրինութիւն եւ անթառամ պսակ կը բերէ քեզի՝ Սուրբ Էջմիածինէն, ծննդավայրը քու լոյս հոգիիդ»:

Կոնդակի ընթերցումից հետո կատարվեց հանդիսավոր հոգեհանգստյան արարողություն:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը, ինչպէս նաև սփյուռքահայ հյուրեր:

